Ձև N 5.5.1

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 71**

*հերթական համարը*

*Նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունների վերաբերյալ (ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությանը)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքը (Եղվարդ քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

| Մարզ, համայնքը, բնակավայրը<br>Հողամաս(եր)ի մակերես(ներ)ը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամաս(եր)ի նպատակային և գործառնական նշանակություն(ներ)ը | Փոփոխությունից հետո հարկայնությունը/ հապավումն ըստ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման N2 հավելվածի կառուցապատման չափորոշիչների աղյուսակի, հապավմանը համապատասխան չափորոշիչները (կառուցապատման տոկոսը, կանաչապատման տոկոսը, կառուցապատման խտությունը) |
|---|---|---|
| ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի (Եղվարդ քաղաք)<br><br>07-004-0546-0196 կադաստրային ծածկագրով 0.08249 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող | 07-004-0546-0196 կադաստրային ծածկագրով 0.08249 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման հողեր | Համաձայն Կոտայք-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի |

| | |
|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | |
| | **Ե. Վարդանյան** |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | |
| | **Լ. Առաքելյան** |

Երևան, «20» «փետրվարի» 2026թ.

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գրությամբ ներկայացված պայմանները (կցվում է):

4. Նաիրի համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի (Եղվարդ քաղաքի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

5. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի (Եղվարդ քաղաքը) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները: